

«Օրինականացնելով գենդերային կարծրատիպերը՝ ՀՀ դատական համակարգն ու
գենդերային խտրականությունը գենդերային հիմքով ընտանեկան բռնությունների գործերը
քննելիս»
գեկույց

Ամփոփագիր ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեղինակ՝ Մարիա Աբրահամյան
Խմբագիր՝ Զարուհի Հովհաննիսյան

Երևան 2017

1. **Զեկույցի համառոտ տվյալները.** 2010 թ-ից առ այսօր «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռախիցիայի»/այսուհետ՝ Կռախիցիա/ կռղմից մշտադիտարկվել է 8 կնոջ դատական գործ՝ ՀՀ 11 դատական ատյանում , որից 3 սպանության, 2 խոշտանգման, 3 ծեծի ու մարմնական վնասվածքների և 1 երեխայի ապօրինի առևանգման մեղադրանքներով: Բացառությամբ վերջին դեպքի, որը գենդերային հիմքով խտրականության արդյունքում արդար դատաքննության իրավունքի կռալիտ խախտման դեպք է, մյուս դեպքերում որպես մեղադրյալ ներգրավվել է տուժող կնոջ հետ նախկինում կամ հանցագործության պահին փաստացի ամուսնական հարաբերություններում գտնվող անձը և մեկ դեպքում ամուսնու մայրը:
2. **Գենդերային բռնության հիմնապատճառը.** ՀՀ-ում Կռախիցիայի կռղմից մշտադիտարկված գենդերային հիմքով ընտանեկան բռնության գործերի և ամբաստանյալի կռղմից քրեորեն պատժելի արարքի հիմքում ընկած են կնոջ ու տղամարդու գենդերային կարծրատիպերով պայմանավորված դերերն ու դրանց վերաբերյալ հասարակական ակնկալիքները: Համաձայն մշտադիտարկված դատական գործերի՝ մեղադրանքի և դատավարական կռղմերի ու վկաների վկայությունների՝ *կնոջ՝ «ատաքինի, պարկեշտ, հնազանդ ու ընտանիքի լավ մայր լինելու»* սուբյեկտիվ վիճարկումը ու *տղամարդու՝ «տան գլուխ, որոշումներ կայացնող, ընտանիքի անդամների կյանքը վերահսկող, բռնության միջոցով իր իշխանությունն ընտանիքում հաստատող»* դերերն ու պատկերացումներն են հանդիսանում կանանց նկատմամբ իրենց գուգրնկերների ու ընտանիքի անդամների կռղմից կատարված բոլոր հանցագործությունների շարժառիթն ու դրդապատճառը: Բոլոր գործերում հանցագործության պատճառ ու մեղադրանքի հիմք են տուժող կնոջ վարքի վերաբերյալ հետևյալ սուբյեկտիվ պատկերացումները. *«լավ մայր չէր», «երեխաներին լավ չէր դաստիարակում», «կասկածվում էր դավաճանության մեջ», «ատաքինի ու համեստ չէր», «լավ կին չէր՝ տները մաքուր չէին, ճաշը պատրաստված չէր»,* որի արդյունքում հանցագործի արարքի համալիր քննության փոխարեն, դատական դահլիճը օգտագործվել է նման բնութագրերի հավաստիությունը պարզաբանելու համար: Այսինքն, դրանք վիճարկելու և օրենքի ուժով խստորեն քննադատելու ու պատժելու փոխարեն՝ դատարանը կամ պատշաճ ուշադրության չի արժանացրել, կամ վերահաստատել է այդ հանցածին կարծրատիպերը, այդ թվում, տուժողներին ուղղված նմանօրինակ արտահայտություններով՝ *«մեծ տղա էս, բա չէի՞ր կարողանում մամայիդ ասել...», «մի կտոր հացի համար էի՞ր մնացել էդ տանը», «հլը ճիշտն ասա, ի՞նչ էս թաքցնում»:* Մինչդեռ վերոնշյալ երևույթները հանդիսանում են ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քրեական, Քրեական դատավարության և Դատական օրենսգրքերի, Դատավորի վարքագծի կանոնների, ինչպես նաև ՄԻԵԿ-ի, ԿՆԽՎԿ-ի ու ՔՔԻՄԴ-ի դրույթների կռալիտ խախտում:
3. **Իրավապահ մարմինների արձագանքը գենդերային բռնություններին.**
Ա.Արձանագրվել է ոստիկանության անգործություն. գրեթե բոլոր գործերի փաստական հանգամանքներում առկա են մեղադրյալի կռղմից նախկինում ևս գործած բռնությունների մասին տուժող կնոջ դիմումներ՝ ոստիկանությանը, որոնք

հիմնականում *կարճվել են «դիմումը հետ վերցնելու», կամ «հանցակազմի բացակայության»* հիմքերով: Սա նախաքննության մարմինների կողմից պատճառաբանվում է նրանով, որ այդ մեղադրանքները ՀՀ քրեական օրենսդրությամբ հանդիսանում են մասնավոր հետապնդման գործեր, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183 (3) հոդվածով սահմանվում է, որ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում մասնավոր մեղադրանքի գործերի հարուցման կարգից կարող են լինել շեղումներ, իսկ ՄԻԵԴ-ն իր մի շարք որոշումներում (ՀՀ ՔրԴՕ 8(4) հոդվածով կիրառելի է ՀՀ-ում) ձևավորել է այն իրավական դիրքորոշումը, որ առանձին դեպքերում՝ մասնավորապես ընտանեկան բռնության գործերով պետություններն ունեն պոզիտիվ պարտականություն պատշաճ քննություն իրականացնելու, ընդհուպ, մասնավոր հետապնդման գործերը հանրային մեղադրանքի կարգով քննելու համար: Օրինակ՝ Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով 2009թ. հունիսի 9-ի (Դիմում Հ-33401/02) վճռում, Դատարանը նկատում է, որ գոյություն ունեն որոշակի գործոններ, որոնք կարող են հաշվի առնվել քրեական հետապնդումը շարունակելու հարցում՝

- հանցանքի ծանրությունը,
- արդյո՞ք տուժողին պատճառվել է ֆիզիկական, թե հոգեբանական վնաս,
- արդյո՞ք մեղադրյալի կողմից գործադրվել է զենք, թե ոչ,
- արդյո՞ք հարձակումից հետո որևէ սպառնալիքներ հնչել են մեղադրյալի կողմից,
- արդյո՞ք մեղադրյալը պլանավորել է հարձակումը, թե ոչ,
- տանը ապրող երեխաների վրա ունեցած ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական),
- մեղադրյալի կողմից կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը,
- շարունակական վտանգը տուժողի կամ մեկ այլ անձի առողջության կամ անվտանգության համար, ով ներգրավված է եղել կամ կարող էր ներգրավված լինել միջադեպին,
- մեղադրյալի հետ տուժողի փոխհարաբերությունների ներկայիս վիճակը
- փոխհարաբերությունների վիճակը նախկինում, մասնավորապես արդյոք նախկինում գործադրվել է բռնություն, թե ոչ,
- մեղադրյալի նախկինում հանցանք կատարած լինելը, հատկապես՝ բռնությամբ ուղեկցվող:

Ասվածից կարելի է եզրակացնել, թե որքան մեծ է կրկին անգամ հանցագործություն կատարելու վտանգը, այնքան ավելի հավանական է, որ քրեական հետապնդումը պետք է շարունակվի հանուն հանրային շահից բխող անվտանգության՝ անգամ տուժողի կողմից իր բողոքը հետ վերցնելու դեպքում: Մինչդեռ *դիտարկված բոլոր գործերում առկա են տուժող կնոջ կողմից ոստիկանություն ներկայացված նվազագույնը երկու բողոք՝ բռնության մասին*: Ավելին բացառությամբ 3 սպանության դեպքերի, երբ ամբաստանյալները կալանավորվել են, մնացած բոլոր

գործերում տուժող կանայք ահաբեկվել և բռնությունների են ենթարկվել նույնիսկ դատաքննության ընթացքում, սակայն այդ գործողություններն անհետևանք են մնացել բռնարարների համար:

Բ.Արձանագրվել է նաև դատարանի ու նախաքննության մարմինների կողմից երկակի ստանդարտների կիրառում՝ պայմանավորված դատավարական կողմերի գեղեցիկ կարծրատիպերով, որի հիմքով էլ հանցանքին ոչ համաչափ պատիժներ են նշանակվել՝ խախտելով տուժողի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների իրավունքը: Այսպես, Դատարանում չապացուցված «Դիանայի պարբերական հակաբարոյական վարքագիծը» հանդիսացել է սպանության գործով մեղմացուցիչ հանգամանք՝ ամբաստանյալի պատիժը նվազեցնելու, իսկ Սարգիս Հակոբյանը, «ով երկու տարի բնակվել է այլ կնոջ հետ (ընտանեկան դավաճանություն) և հոգ չի տարել երեխաների մասին», ինչն ապացուցվել է դատարանում համապատասխան փաստաթղթերի առկայությամբ, որակվել է որպես «դրական» և Սարգիս Հակոբյանը ճանաչվել է «մինչև 14 տարեկան երեխայի խնամակալ», ինչն էլ հանդիսացել է պատիժը մեղմացնող հանգամանք: Մեկ այլ օրինակ. Չնայած Թագուհին իր նախկին ամուսնու կողմից ֆիզիկական բռնության կիրառման երեք հաղորդագրություն էր ներկայացրել ոստիկանություն, սակայն ամուսնու մեկ հաղորդագրությունը՝ Թագուհու կողմից վեճի ընթացքում Վլադիկին «թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ» հասցնելու համար, որի ժամանակ Թագուհին ևս մարմնական վնասվածքներ էր ստացել ամուսնու կողմից, ընդունվել էր վարույթ և քրեական գործ հարուցվել տուժող կնոջ նկատմամբ:

Գ.Այս համատեքստում խնդիր է նաև ամբաստանյալի՝ ապացույցներով չհաստատված վկայությունների հիման վրա մեղադրանքի և դատահոգեբանական փորձաքննությունների եզրակացությունների կառուցումը: Այսպես, բոլոր գործերով մեղադրանքները հիմնված են մեղադրյալի վկայությունների վրա, ինչպես օրինակ՝ «*«կանաչի չբերելու համար» իր դատեր նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառելը»*, կամ *«խանդի շարժառիթով և ամուսնական անհավատարմության պատճառով սպանելու դիտավորությամբ...»* և այլն: Դրա ապացույցն է այն, որ ճնշումների արդյունքում Հեղինե Դարբազյանի գործով դատաքննության վերջում նույնիսկ փոխվել է մեղադրանքը, քանի որ ինչպես նշվում է դատական գործում «ամբաստանյալի ... որպես հանցագործության շարժառիթ հաստատված ամուսնական անհավատարմությունը և խանդը մատնանշելը չի բխում քրեական գործի քննությամբ ձեռք բերված ապացույցներից»: Ավելին, Դիանա Նահապետյանի սպանության գործով դատավարության պարագայում անգամ դատավճիռն է հենվել դեպքից երեք տարի անց, միայն մեղադրյալի ցուցմունքների վրա հենված դատահոգեբժշկական ու դատահոգեբանական եզրակացության վրա:

4. **Հանցանքի պատժելիության խնդիրները դատարաններում.** Բացի վերբալ վերագոհարկումից՝ անհանգստացնող են նաև դատարաններում տղամարդ

մեղադրյալների գործած հանցանքներին ոչ համաչափ պատիժները: Այդ թվում մեղմացուցիչ հանգամանքների պարտադիր կիրառումն՝ ի հակադրություն ծանրացուցիչ հանգամանքների գրեթե մշտական անտեսման:

- ❖ Բոլոր գործերում մեղմացուցիչ հանգամանք է դիտարկվել տուժողի և մեղադրյալի համատեղ *անչափահաս երեխաների առկայության փաստը*, նույնիսկ այն դեպքերում, երբ ամբաստանյալը մեղադրվել է կամ գործում առկա են եղել այդ երեխաների նկատմամբ բռնության կիրառման փաստեր, կամ մեղադրյալը փաստացի չի զբաղվել այդ երեխաների խնամքով ու դաստիարակությամբ: (Տե՛ս բոլոր գործերը, բացի Դիանա Նահապետյանի և Մարիամ Գևորգյանի, քանի որ նրանք մեղադրյալի հետ համատեղ երեխաներ չեն ունեցել): Այս հանգամանքներում արձանագրվում է նաև երեխաների իրավունքների փաստացի խախտում ու շահերի անտեսում, ինչպես նաև *ամրապնդվում է «տղամարդու իրավունքները գերակա են երեխաների ու մոր շահերից ու իրավունքներից» հասարակության մեջ արմատացած կարծրատիպը*:
- ❖ Մեղմացուցիչ հանգամանք է հանդիսանում նաև *ամբաստանյալի «դրական» բնութագիրը*, նույնիսկ այն դեպքերում, երբ առկա են *ընտանիքի անդամների երկարաժամկետ ֆիզիկական ու հոգեբանական բռնության ենթարկելու, աշխատանք չունենալու (տե՛ս Հեղինե Դարբասյանի գործը) իր երեխաների հանդեպ սեռական ոտնձգություններ անելու, ակոհող օգտագործելու (տե՛ս Լուսինե Ղաբուզյանի գործը), և այլ կնոջ հետ փաստացի հարաբերություններում (տե՛ս Հասմիկ Խաչատրյանի գործը)* գտնվելու վկայություններ ու փաստեր:
- ❖ Անհանգստացնող է նաև դատարանների կողմից *ամբաստանյալի՝ «ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցելը»*, որպես ընտանիքի անդամների հանդեպ գործած բռնության մեղմացուցիչ հանգամանք. Դիանա Նահապետյանի 21 դանակի հարվածով դաժանաբար սպանության գործով դատավարության ընթացքում նույնիսկ դատավորը նշել է, որ *«եթե մասնակցել էս պատերազմին և կարող էս ապացուցել, ապա քեզ հենց դատարանի դահլիճից ազատ կարձակենք»*, իսկ Լուսինե Ղաբուզյանի գործով դատավարության ընթացքում *ՀՀ սահմանների պաշտպանության մասնակցելը հանդիսացել է մեղմացուցիչ հանգամանք, ամբաստանյալի՝ կնոջ ու դստեր հանդեպ գործած հանցագործությունների պատիժը որոշելիս: Մինչդեռ գոյություն ունեն տասնյակ աշխատություններ, որոնք գիտականորեն ապացուցում են միլիտարիզացիայի ու ընտանեկան բռնության ուղիղ համեմատական կապը Իսրայելի¹ օրինակով: Ավելին, Մեծ Բրիտանիայում հատուկ*

¹ Մ. Ադելման «Բանակը, ռազմամոլությունն (միլիտարիզմ) ու ընտանեկան բռնության ռազմականացումը», Արիզոնայի պետական համալսարան «Կանանց նկատմամբ բռնություն» հանդես, 9-րդ հատոր, 9-րդ թողարկում, սեպտեմբեր 2003, էջ՝ 1118-1152, բնօրինակը՝ անգլերեն

[M. Adelman "Military, Militarism and Militarisation of Domestic Violence" Arizona State University, Violence Against Women Journal, Volume:9 Issue:9 Dated:September 2003 Pages:1118 to 1152]

Կապուղի՝ <http://bit.ly/2k2gMko>

ծրագիր է մշակված զինվորների ընտանիքներին ընտանեկան բռնության հարցերով աջակցություն տրամադրելու համար՝ որպես հատուկ ուշադրության ենթակա խումբ (Ընտանեկան բռնություն. աջակցության ուղեցույց զինված ուժերի համայնքի համար), իսկ ԱՄՆ-ում ընտանիքի անդամի հանդեպ բռնություն գործադրած անձին անմիջականորեն արգելվում է զինված ուժերում ծառայությունը՝ զենք կրելու արգելքի հիմքով (Ընտանեկան բռնության մեջ մեղադրված անձանց զենքի կրման արգելք):

- ❖ *Մեղադրյալին համաներմամբ ազատ արձակելը* ևս ընդունված պրակտիկա է նմանատիպ գործերի շրջանակում: Չնայած համաներման կիրառման իրավաչափությունը գնահատելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանը, իր ՄԴ3/0045/01/13[1] որոշմամբ արձանագրում է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով դատարանը ... համաներման ակտը կիրառելու վերաբերյալ իր հետևությունը շարադրելիս պարտավոր էր պատճառաբանել, թե.
 - ա) որ իրավանորմերով է ղեկավարվել ... Համաներման ակտը կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս,
 - բ) ինչ փաստական տվյալների գնահատման արդյունքում է եզրահանգել, որ մեղադրյալի նկատմամբ կիրառելի է Համաներման ակտը: Ավելին, ՀՀ-ում ոչ Սահմանադրությամբ և ոչ էլ օրենքներով չի սահմանվում, թե ինչ է համաներումը, դրա խնդիրներն ու սկզբունքները, ոչ հստակ են կիրառման մեխանիզմներն ու առանձին խորը հետազոտության թեմա է ՀՀ-ում կիրառված համաներման ակտերի արդյունավետությունն ու քրեական օրենսգրքի սկզբունքներին համապատասխանությունը: Քանի որ մշտադիտարկված գործերի շրջանակում և՛ դատաքննության ընթացքում և՛ Համաներման ակտի կիրառմամբ ազատ արձակմանը հետևել են հանցագործություններ, նմանատիպ գործի շրջանակներում և՛ դատարանի պատիժը մեղմացնելու վճիռը և՛ համաներման կիրառումը, չեն համապատասխանում ՀՀ Քրեական օրենսգրքի 2-րդ և 10-րդ հոդվածով սահմանված խնդիրներին ու սկզբունքներին, ինչը կրկին խաթարում է կնոջ՝ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների իրավունքի իրացումն ու նպաստում ՀՀ-ում գենդերային բռնության անպատժելիության ամրապնդմանը :
- ❖ Արդյունքում բոլոր գործերով դատարանը սահմանել է գործած հանցանքին ոչ համաչափ պատիժ: Երեք դաժան սպանությունների գործով սահմանվել է.
 - 3.5 տարի՝ 21 հարվածով դանակահարության, 10 տարի՝ խոշտանգմամբ սպանության ու 11.5 տարի ազատազրկմամբ պատիժ՝ 30 դանակի հարվածով սպանության համար,
 - 2 խոշտանգման մեղադրանքի գործով կիրառվել է համաներում,
 - ծեծի և մարմնական վնասվածքների դեպքերում միայն տուգանք՝ 50 հազար դրամ և 150 հազար դրամ գումարի չափով:

5. **Հանցագործության բնույթի ոչ պատշաճ ընկալումը դատարանի կողմից.** Դատարանն իր իրավական վերլուծությունում և վճիռ կայացնելիս՝ հաշվի չի առել նաև հանցագործության նախապատմությունը, ամբաստանյալի գործած հանցանքի շարժառիթը և հասարակության համար վտանգավորության աստիճանը: Դիտարկված բոլոր հանցագործությունների՝ այդ թվում 3 սպանությունների քննության ընթացքում պարզվել ու ապացուցվել է դրանց նախապատմությունում առկա՝ մինչև 15 տարի տևողությամբ պարբերական տնտեսական, հոգեբանական, սեռական և ֆիզիկական բռնության կիրառումը տուժողների նկատմամբ, իրենց հետ փաստացի ամուսնական հարաբերություններում գտնվող անձանց կողմից:

Ա. Նախկինում մեղադրյալի՝ տուժողին բռնությունների ենթարկելու դեպքերը, որոնք ապացուցվել են տուժողների ու վկաների վկայություններով և դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններով, դատարանը, որպես կանոն, չի դիտարկել, իսկ այս *գործերը քննվել են որպես մեկանգամյա հանցանք՝ հիմնականում որակվելով « կենցաղային խնդրի շուրջ ծագած վեճ»*՝ դատարանի կողմից անտեսվել է հանցանքի նախապատմությունը, նախաքննություն իրականացնող մարմինների անգործությունն ու կրկնահանցագործության վտանգը:

Բ. Դատարանում անդրադարձ չի կատարվել ԿՆԽՎԿ-ի շրջանակներում կանանց իրավունքների դիտարկմանը և ՄԻԵԴ նախադեպային իրավունքով ընտանեկան բռնությունների քննման ու դատավճիռների կայացման յուրահատկություններին, ինչի հնարավորությունն ընձեռնված է ՀՀ օրենսդրությամբ:

Գ. Չնայած կրկնահանցագործությունների ու տուժողի՝ կրկին բռնության ենթարկվելու վտանգին, դատարանը ո՛չ դատաքննության փուլում, ո՛չ էլ դատավճռով չի սահմանել պաշտպանության միջոցներ՝ պաշտպանելու տուժողին վերագոհարկման վտանգից: Ավելին, բացառությամբ սպանության գործերով որպես մեղադրյալ ներգրավվածների, մյուս հանցագործները ստորագրությամբ ազատ են արձակվել, ինչի արդյունքում արձանագրվել են տուժողների վրա հարձակումներ՝ նույնիսկ դատաքննության ընթացքում:

6. **Տուժողին պատշաճ փոխհատուցման խնդիրներ.** դիտարկված գործերից միայն Դիանա Նահապետյանի և Զարուհի Պետրոսյանի սպանության գործերով է դատարանը ամբողջովին բավարարել տուժողի վնասի փոխհատուցումը, քանի որ ամբաստանյալի կողմից փոխհատուցման գումարի վերաբերյալ առարկություն չի ներկայացվել: Մինչդեռ մյուս դեպքերում դատարանը կամ մասնակի է բավարարել հայցը, կամ ընդհանրապես քննության չի առել քրեական գործի շրջանակներում՝ թողնելով գույքային պահանջները ներկայացնել քաղաքացիական դատավարության կարգով, ինչը տուժողից պահանջել է ժամանակի ու նյութական լրացուցիչ ռեսուրսներ:

7. **Հանցանքի ընկալումը հասարակության կողմից.** Պատշաճ տեղեկատվության և իրազեկվածության պակասի արտահայտումն է նաև ընտանեկան բռնության հարցերով դատավարության կողմերի վերաբերմունքը միմյանց նկատմամբ: Մշտադիտարկման մասնագետների կողմից չի գրանցվել որևէ դեպք, երբ մեղադրյալի ընտանիքի անդամը գոջա, իր ցավակցությունը կամ գորակցությունը հայտնի տուժողին կամ նրա ընտանիքին, մինչդեռ նրանք նախկինում մեկ ընտանիք ու բարեկամներ են համարվել: Ավելին, ճնշող մեծամասնության դեպքերում տուժողի աջակցիները՝ հատկապես հասարակական կազմակերպությունները, մեղադրվել են *«կնոջը խաբելու», «ընտանիքը քանդելու», «հային ոչ հարիր արժեքներ քարոզելու»* մեջ և սպառնալիքների ու բռնությունների ենթարկվել:
8. **Իրավական պաշտպանությունը.** ՀՀ եռաստիճան դատական համակարգը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմինները ևս փաստացի դերակատարում չունեն մշտադիտարկված գործերի քննության ու կանանց արդար դատանության իրավունքի իրացման տեսանկյունից: Բացառությամբ մեկ միջանկյալ դատական ակտի՝ Առաջին աստիճանի դատարանի կայացրած և ոչ մի վճիռ չի բեկանվել վերադաս աստիճանների կողմից (մինչդեռ միայն 2 գործով վերաքննիչ և 4 գործով վճռաբեկ դատարան բողոք չի ներկայացվել): ՀՀ-ից անհատական բողոքեր չեն ներկայացվել ՄԻԿ և ԿՆԽՎ կոմիտե, ինչը կարելի է համարել նաև այդ գործիքների ու դրանց արդյունավետության մասին պատշաճ տեղեկատվության պակաս: Դա բացատրվում է ՀՀ *պետական և ոչ պետական ԲՈԲՀ-երի իրավաբանական ֆակուլտետների և ՀՀ Փաստաբանական դպրոցի ու ՀՀ Արդարադատության ակադեմիայի ուսումնական պլաններում գենդերայնորեն զգայուն մարդու իրավունքների ուսումնական ծրագրերի բացում:*

Մինչդեռ համադրելով ՀՀ ներպետական օրենսդրության ու միջազգային պարտավորությունների պահանջները, կարող ենք սահմանել, որ ՀՀ-ը պարտավոր է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ երաշխավորելու տուժող կնոջ՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը՝ ապահովելով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներով (այդ թվում՝ մեղադրյալի հանցանքին համաչափ պատիժ, տուժողի ու նրա ընտանիքի անվտանգությունը պաշտպանող միջոցառումներ և արդարացի փոխհատուցում) և գերծ խտրականությունից ու անհավասար վերաբերմունքից դատավարություն (այդ թվում գերծ մշակութային նորմերով, ավանդույթներով և հասարակությունում առկա գենդերային կարծրատիպերով պայմանավորված խտրականությունից):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաձայն «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից ԵԱՀԿ պատվերով 2011 թ. իրականացված հետազոտության արդյունքների՝ հետազոտության իրականացման պահի դրությամբ հարցված կանանց 60%-ը իրենց կյանքի ընթացքում ենթարկվել է մեկ կամ մի քանի տեսակի ընտանեկան բռնության, իսկ գրեթե 40%-ը՝ կյանքի վերջին երկու տարիների ընթացքում: Դա նշանակում է, որ գենդերային հիմքով խտրականության ու ընտանեկան բռնության գործերով արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների ապահովումը հրամայական է բնակչության մեծամասնության իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու համար: Այս համատեքստում. կրթական ու օրենսդրական բարեփոխումների միջոցառումների իրականացումը թերևս և՛ կհամապատասխանի ՀՀ միջազգային պարտավորությունների կատարմանը, և՛ միանշականորեն կնպաստի իրավիճակի բարելավմանը:

1. Օրենսդրական փոփոխություններ

1.1 Ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունում.

2007 թվականից այս օրենքի ընդունումը ընտանեկան բռնության վերաբերյալ քննարկումների հիմնապյունն է: 2016 թվականին ևս, ԿՆԽՎԿ կոմիտեն CEDAW/C/ARM/CO/5-6 (para 17 a և b) հանձնարականով շեշտել է օրենքի ընդունման անհրաժեշտությունը: Այս օրենքի համապարփակությունը, գործունակությունն ու արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ է վավերացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիան և օրենքը համապատասխանեցնել դրա և «Կանանց նկատմամբ բռնությունների վերաբերյալ ԿՆԽՎԿ թիվ 19 Ընդհանուր հանձնարարականի չափորոշիչներին: Մասնավորապես՝

- քրեականացնել գենդերային հիմքով բռնությունը՝ ներառյալ կնասպանությունն ու ամուսնական բռնաբարությունը,
- օրենքի հիմքում դնել զոհակենտրոն մոտեցում,
- երաշխավորել իրավաբանական օգնության ու պաշտպանության անմիջական միջոցների, ներառյալ պաշտպանության հրամանների մատչելիությունը
- նախատեսել քաղաքացիական ու քրեական պատժամիջոցներ ու դրանց իրագործման համար սահմանել պատասխանատու մարմին:

1.2 Խտրականությունը արգելող համապարփակ օրենքի ընդունում:

Ինչպես նշվեց գեկույցում, չնայած ՀՀ-ում խտրականության արգելք պարունակող ընդհանուր դրույթը սահմանված է թվով 41 օրենսդրական ակտերով, մեր ներպետական օրենսդրության մեջ դեռևս բացակայում է «խտրականություն» եզրի սահմանումն ու հասցեագրող արդյունավետ պատժամիջոցները: Հետևաբար խտրականությունը արգելող համապարփակ օրենսդրության ընդունումը՝ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի ու ՄԻԵԴ նախադեպային որոշումների տառին համապատասխան, նաև պահանջ է ԿՆԽՎԿ CEDAW/C/ARM/CO/5-6 para 7 հանձնարարականով:

1.3 Ընտանեկան բռնությունը հասցեագրող ներպետական օրենսդրության

բացակայության պայմաններում, հենվել ու կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ընձեռված հնարավորությունները՝ կիրառելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքը (հոդված 8 (4)) ու քննելով մասնավոր հետապնդման գործերը հանրային մեղադրանքի կարգով (հոդված 183(3))՝ ՄԻԵԴ նախադեպերով սահմանված ընտանեկան բռնությանը բնորոշ գործոնների առկայության պարագայում:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 183(3)-ը սահմանում է, որ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում մասնավոր մեղադրանքի գործերի հարուցման կարգից կարող են լինել շեղումներ: Իսկ նույն օրենսգրքի հոդված 8 (4)-ի համաձայն «[...] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար՝ նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ [...]»: Այս տեսանկյունից ՀՀ միջազգային պայմանագրերում առկա են գործող քրեական դատավարության օրենսգրքից տարբերվող լուծումներ, որոնց համաձայն մասնավոր հետապնդման գործերը կարող են քննարկվել հանրային մեղադրանքի կարգով և իրավական պաշտպանության ավելի արդյունավետ միջոցներ երաշխավորել:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն անդրադառնալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (ՀՀ վավերացրել է 2001թ.) 2-րդ, 3-րդ և 8-րդ հոդվածներին, իր մի շարք որոշումներում ձևավորել է այն իրավական դիրքորոշումը, որ առանձին դեպքերում, մասնավորապես ընտանեկան բռնության գործերով պետություններն ունեն պոզիտիվ պարտականություն՝ պատշաճ քննություն իրականացնելու, ընդհուպ մասնավոր հետապնդման գործերը հանրային մեղադրանքի կարգով քննելու համար: Օրինակ՝ Բելաբուան և Ս-ն ընդդեմ Բուլղարիայի (2008թ. հունիսի 12-ի որոշում), Օփուզն ընդդեմ Թուրքիայի (2009թ.

հունիսի 9-ի որոշում)), Կոնստրուկտիվ Սլովակիայի (2007թ. մայիսի 31-ի վճիռ) գործերով վճիռները:

1.4 Իրականացնելով խնդրակենտրոն ուստիկանական գործունեություն՝ կիրառել «S.A.R.A» մոդելն ու քրոնիկ բնույթի համայնքային խնդիրների լուծման գերակա ուղղություն ճանաչել ընտանեկան ու գենդերային հիմքով բռնությունը:

ՀՀ-ում ոչ մի օրենսդրական ակտ որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսում որոշումներ կայացնելու առումով ուստիկանների պաշտոնական լիազորությունների շրջանակի վերաբերյալ: Այսինքն, սահմանափակում չկա առ այն, թե որոնք պետք է լինեն այն հայեցողության սահմանները, որոնց իրացումը անհրաժեշտ կհամարվի համայնքի ներսում ուստիկանության գործունեության դրական արդյունքների հնարավորությունը առավելագույնի հասցնելու համար՝ այդ թվում պաշտպանության միջոցների կիրառումը: Հետևաբար ներկա իրավական դաշտում խնդրակենտրոն ուստիկանական գործունեություն իրականացնելու դեպքում, որը ենթադրում է նախաձեռնողական, այլ ոչ թե ավանդական արձագանքող մոտեցում քաղաքացիների խնդիրների հանդեպ՝ համագործակցելով բնակիչների, համայնքի խնդիրներին բնորոշ հարցերով զբաղվող ՀԿ-ների, մասնագիտացված պետական ու ոչ պետական կառույցների հետ, զգալիորեն կնվազեցնի ընտանեկան բռնությունը՝ բարձրացնելով հասարակությունում ուստիկանության հանդեպ վստահությունը և նվազեցնելով հանցավորության դեպքերը: Այսպես, ըստ ԵԱՀԿ փորձագետ Դեյվիդ Այենսոնի կողմից մշակված «Համայնքային ուստիկանության ոլորտում ներգրավված ուստիկանության աշխատակիցների համար» ուղեցույցի՝ համայնքների ներսում առկա խնդիրների բացահայտման, ուսումնասիրման և լուծման բարձր արդյունավետության համար ընդունված ձևաչափ է «S.A.R.A» *մոդելի* կիրառումը (scan/survey՝ զննում, analyses՝ վերլուծում, responce՝ արձագանքում, assessment՝ գնահատում), ինչը հնարավորություն կտա ճիշտ տարբերակել տուժողին, իրավախախտին ու խնդրի սկզբնապատճառը, որի վերացումով էլ երկարաժամկետ լուծում կտրվի հարցին: Հաշվի առնելով ընտանեկան և գենդերային հիմքով բռնության տարածվածության ու դրա լուծման դեպքում համայնքում անվտանգության ու հանցավորության զգալի կրճատումը՝ ընտանեկան ու գենդերային հիմքով բռնությունների ներառումը քրոնիկ բնույթի համայնքային խնդիրների լուծման գերակա ուղղություններում զգալիորեն կբարելավի ընդհանուր իրավիճակը:

1.5 Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝ դատավորների գործունեության գնահատման որակական չափորոշիչներում ներառել

դատաքննության գենդերային զգայունությունը, իսկ վճիռներում՝ միջազգային իրավական պրակտիկային հղումները չափող հատուկ ինդիկատորներ:

Համաձայն ՀՀ Դատական օրենսգրքի 96.2 հոդվածի², որակական չափանիշների հիման վրա դատավորների գործունեության գնահատումն անցկացվում է գնահատման ժամանակահատվածում ընդգրկված չորս տարիների տվյալների հիման վրա, որակական չափանիշներով գնահատման համար հանձնաժողովը պետք է հաշվի առնի դատավորի քննած գործերի առնվազն 10 դատական նիստի ձայնային արձանագրություններ (բացակայության դեպքում՝ պարզ թղթային արձանագրություններ) և առնվազն 10 գործն ըստ էության լուծող դատական ակտեր (պատահական ընտրությամբ): Այս արդյունքների հիման վրա էլ որոշվում է դատավորին լրացուցիչ վերապատրաստման ուղարկելու անհրաժեշտությունը և սահմանվում են այն չափանիշները, որոնցով նրա հմտությունները կատարելագործվելու անհրաժեշտություն ունեն, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվելու թույլտվություն և արտոնություններ են սահմանում: Այսպիսով, սա կնպաստի դատական համակարգում գենդերայնորեն զգայուն ու ՀՀ դատավորի վարքագծի և ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան դատաքննության իրականացմանը:

1.6 Ստեղծել հատուկ մասնագիտացված դատարաններ , որին ընդդատյա կլինեն Ընտանեկան բռնության կամ ընդհանրապես խտրականության վերաբերյալ դատական գործերը:

Ինչպես ցույց է տալիս Ամերիկյան իրավապրակտիկան³, այսպիսի դատարանների ստեղծումը միանշանակ կնպաստի խտրականության հիմքով և ընտանեկան բռնության տարբերով հանցագործությունների թվի կրճատմանը՝ ապահեղծվով պատշաճ պաշտպանություն տուժողների համար և իրավաչափ պատիժ մեղադրյալների համար: Նման դատարանները տարբերվում են ընդհանուր իրավասության դատարաններից իրենց նեղ մասնագիտական ուղղվածությամբ և դատավորների ու աշխատակիցների համապատասխան գիտելիքների ու հմտությունների առկայությամբ, ինչը հնարավորություն կտա համապարփակ ու պատշաճ դատաքննություն իրականացնելու ու արդարադատություն հաստատելու:

² ՀՀ Դատական օրենսգրքի

Կայտույթ՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=103057>

³ «Ընտանեկան բռնության դեպքերով արդարադատության իրականացման բարելավման ուղենիշներ եւ աշխատակարգեր» Ընտանեկան բռնության գործելակերպի և ընթացակարգի աշխատանքային խմբի վերջնական զեկույց, Կալիֆոռնիայի դատական խորհուրդ 2008 թ. “Recommended Guidelines and Practices for Improving the Administration of Justice in Domestic Violence Cases” FINAL REPORT OF THE DOMESTIC VIOLENCE PRACTICE AND PROCEDURE TASK FORCE, Judicial Council of California, 2008

Կայտույթ՝ http://www.courts.ca.gov/documents/dvpp_rec_guidelines.pdf

1.7 Ներառել ու կիրառել գենդերայնորեն զգայուն, կարծրատիպերն ու խտրականությունն ուղերձող չափորոշիչներ՝ հեռուստառադիոընկերությունների լիցենզավորման, վերահսկողություն ու մշտադիտարկում իրականացնելու կարգերում:

Համաձայն Հեռուստատեսության ու ռադիոյի մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի⁴՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն ունի հեռուստառադիոընկերությունների գործունեությունը լիցենզավորելու, մշտադիտարկելու, հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների օգտագործման միջոցով դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը պարզելու և օրենքով սահմանված վարչական տույժեր կիրառելու լիազորություններ: Հետևաբար՝ վերոնշյալ չափորոշիչների ներառումը ու կիրառումը կնպաստի մեղիա ոլորտի «առողջացմանը» ու հասարակության վնասակար գենդերային պատկերացումների վերացմանը:

1.8 Երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտության չափորոշիչներում ոչ միայն շեշտադրել նյութական ապահովվածությունը, այլև անձի բոնություն գործադրման հավանականությունը, երեխայի արժանապատիվ ու բնականոն զարգացմանն ու հոգեկան առողջության համար բարենպաստ պայմանների առկայությունը:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթներից են երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտությունն ու հետազոտության ակտի դատարան ներկայացման հիման վրա վեճի էության մասին եզրակացություն տրամադրելը: Ինչպես փորձն է ցույց տալիս, այդ եզրակացությունը հիմնականում հենված է նյութական բարեկեցության չափորոշիչների վրա, ինչի արդյունքում երեխաները շարունակում են բնակվել բռնարար ամուսինների/հայրերի հետ, ինչը վտանգ է ներկայացնում՝ երեխայի իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

2. Կրթության ոլորտ

2016 թվականին ԿՆԽՎԿ-ն ՀՀ-ին հասցեագրված CEDAW/C/ARM/CO/5-6 հանձնարարականով շեշտվել է տարրական ու միջնակարգ դպրոցներում, ինչպես նաև իրավաբանական կրթության մեջ գենդերային հավասարության, կանանց իրավունքների և գենդերային հիմքով բռնության մասին պարտադիր ուսուցման ներառման անհրաժեշտությունը:

⁴ Հոդված 36, նույն տեղում

Կապուղի՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=106838>

2.1 Ձեռնարկել միջոցառումներ՝ ապահովելու գենդերայնորեն զգայուն, կարծրատիպերը արմատախիլ անող մարդու իրավունքների ուսուցում կրթության բոլոր մակարդակներում, այդ թվում հանրակրթական դպրոցներում և բարձրագույն իրավաբանական կրթական հաստատություններում:

Հանրակրթական դպրոցների հասարակագիտություն առարկայի դասագրքերի ուսումնասիրությունը գենդերային լուրջ խնդիրներ է վերհանել, իսկ կրթության որակի չափորոշիչների բացակայությունը, ընտանեկան բռնության ու գենդերային խտրականության դասաժամերի քանակի, որակի ու նյութերի ոչ հստակությունը միանշանակ չի նպաստում հանրության իրավագիտակցության ու իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ միջանձնային հարաբերություններում: Մեծ խնդիր է նաև իրավաբանական բարձրագույն կրթություն տրամադրող հաստատություններում ոչ միայն կանանց իրավունքների, այլև ընդհանուր մարդու իրավունքների դասաժամերի սղությունը, ինչի արդյունքում էլ ձևավորվում է նման անտարբերություն՝ մարդու իրավունքների ու գենդերային հարցերի վերաբերյալ: Հետևաբար կանանց և տղամարդկանց միջև հավասարության, կարծրատիպերից գերծ գենդերային դերերի, փոխադարձ հարգանքի և վեճերը առանց բռնության լուծելու, կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հարցերով ուսումնական նյութերի ընդգրկումը պաշտոնական ուսումնական ծրագրերում, կրթական բոլոր մակարդակներում՝ հարմարեցված լինելով ուսումնառողների զարգացող ընդունակություններին: Իսկ ՀՀ պետական և ոչ պետական ԲՈՒՀ-երի՝ հատկապես իրավաբանության ֆակուլտետներում որակյալ գենդերայնորեն զգայուն պարտադիր ու առանձին դասընթացների, գենդերային հիմնահարցերի կամ մարդու իրավունքների կլինիկայի ստեղծումը կնպաստի ոլորտում իրազեկվածության ու իրավունքների պաշտպանության որակի բարձրացմանը:

2.2 Փաստաբանական դպրոցի և Արդարադատության ակադեմիայի դասընթացներում ներառել գենդերայնորեն զգայուն մարդու իրավունքների պարտադիր հատուկ մոդուլներ՝ խթանելու համար այն ըմբռնումը, որ խտրականության բոլոր ձևերն անընդունելի են և հակաօրինական:

Այս երկու հաստատությունները, որոնք պատասխանատու են համապատասխանաբար փաստաբանների և դատավորների ու դատախազների կրթության ու վերապատրաստման համար, սակայն դրանք ևս չեն ձևավորել հատուկ դասընթացներ նվիրված, ինչի արդյունքում էլ դատարանի դահլիճում ևս տուժող կինը վերագոհարկվում է, իսկ նրա իրավունքները մնում են անպաշտպան: Սա նաև

հանդիսանում է ՀՀ պարտավորություն ԿՆԽՎԿ CEDAW/C/ARM/CO/5-6 հանձնարարականի 15 (c) դրույթի համաձայն: Անչափ կարևոր է, որ այս մոդուլները ներառեն հատուկ դասաժամեր՝ վերացնելու նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթները և մյուս բոլոր այն երևույթները, որոնք հիմնված են անձանց խտրականության, կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա:

2.3 Հանրային հեռուստատեսության ու ռադիոյի միջոցով հեռարձակել գենդերայնորեն զգայուն, խտրականությունը դատապարտող ու կարծրատիպերը վերացնող հատուկ ծրագրեր ու հաղորդումներ:

Համաձայն Հեռուստատեսության ու ռադիոյի մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետի, 3-րդ ենթակետի «[h]անրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է՝ 3) մշակել և իրականացնել ծրագրային քաղաքականություն՝ բ.

հեռուստառադիոլսարանին մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը...»:⁵ Հետևաբար գենդերայնորեն զգայուն, խտրականությունը դատապարտող ու կարծրատիպերը կոտրող հատուկ ծրագրեր ու հաղորդումներ հեռարձակելը հանրային հեռուստառադիոընկերությունների օրենքով սահմանված պարտավորությունն է և ՀՀ պարտականությունը՝ համաձայն ԿՆԽՎԿ CEDAW/C/ARM/CO/5-6 հանձնարարականի 15 (b) դրույթի:

⁵ Հեռուստատեսության ու ռադիոյի մասին ՀՀ օրենք, կապուղի՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=106838>